ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«03» «Դեկտեմբեր» 2022 թ. № 139-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N24-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 9-րդ և 20-րդ ենթակետերը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, պետական հիմնարկի և անտառային կոմիտեի գործունեության համակարգման հետևյալ բաշխումը.

1) շրջակա միջավայրի նախարար Հ. Սիմիդյան.

ա. իրավաբանական վարչություն,

բ. ռազմավարական քաղաքականության վարչություն,

գ. միջազգային համագործակցության վարչություն

դ. հասարակայնության հետ կապերի բաժին,

ե. առաջին բաժին,

զ. անտառային կոմիտե,

է. «Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

ը. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ,

2) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մեյմարյան.

ա.բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն,

բ.անտառային քաղաքականության վարչություն,

գ. կենսառեսուրսների կառավարման վարչություն,

դ. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ե. «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
զ. «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
է. «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ը. «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
թ. «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ժ. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ժա. «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն;

3) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գ.Գաբրիելյան.
ա. ջրային քաղաքականության վարչություն,
բ. հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն,
գ. վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչություն,
դ. կլիմայական քաղաքականության վարչություն,
ե.մթնոլորտային քաղաքականության վարչություն,
զ. ջրային ռեսուրսների կառավարման վարչություն,
է. թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն
ը. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

4) շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար Գ. Գուլյան.
ա. ֆինանսատնտեսական վարչություն,
բ. քարտուղարություն,
գ. մարդկային ռեսուրսների կառավարման բաժին:

2. Ուժը կորցրած ճանաչել շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հունվարի 24-ի «Շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, անտառային կոմիտեի, համակարգի պետական ոչ առեվտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, պետական հիմնարկի, գործունեության համակարգումը սահմանելու և Շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հուլիսի 27-ի N281-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N24-Լ հրամանը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

5/3/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«03» մարտ 2022 թ.
ք. Երևան